

Այն ատեն աշխատելու ատենդ յաւիտեանս պիտի անցնի .
 Միսէ՛ առաւօտուն ե. վաստակէ՛ օրն բոլոր .
 Քեզ զօրութիւն ես պիտի տամ, և վարձքդ ես պիտի վճարեմ .
 Եւ օրհնեալ, երեքսրայի օրհնեալ են, այն քանի մը ժրաջան գործաւորները,
 Որ իմ իրենց յանձնած և տուած գործս պիտի ըննեն
 Գնահ գործէ, գնահ գործէ, գնահ գործէ իմ այգւոյս մէջ շատ բան կայ ընելիք,
 Գնահ գործէ, գնահ գործէ, հունձքը շատ է և աշխատաւորներն քիչ :

ՄԱՆՈՒԿՆ ԵՒ ՔԵՐՈՎՔԷՆ

ՔԻՇԵՐԱՅԻՆ ըստթիւն զերկիրս ամեն սրտած էր,
 Նա իրական տեսարան երկնից երես կը փայլէր .
 Աստեղներու ազօտ լոյսն, կիսալուսնոյ միացած,
 Մթնոլորտին ախուր մութն գեռ եւս չէին փարատած :

Արարածք ամէն,
 Քաղցր ՚ի քուն ննջեն .
 Հսկէ Արարիչն,
 Յերկնից խորանէն :

Սա գիմոյցի անակին՝ հէգ բնակիչքն հանգչած չեն
 Հիւանդ մանկան՝ մահձին քով՝ արտասուալից կ'աղօթեն,
 Բարձրեալդ Հոյր քուկդ ենք մենք «Նշխիւն միշտ օրհնեալ կամքդ»
 Զի հայրախնամ տէրութեանդ ծառայենք մենք հնազանդ :

Ի ծունրը իջան,
 Բայց մանկան վրան
 Ոգի մը տեսան
 Փայլակի նման :

Աէս գիշերէն ժամ մը վերջ՝ անմեղ մանուկն կը ժպտէր,
 Վարդանման դէմքին վրայ՝ մահուան դալուկն կը ծածկէր,
 Տառապեալ մայրն, թշուառ հայրն, սրտից խորէն հառաչեն
 Բայց Բարձրելոյն Սուրբ Հրամանն՝ այն սուրբ Մանուկն կը կանչէր :

Լոյս ցոլայր պայծառ
 Ճակտէն ձիւնափայլ,
 Աստեղն պէս վառ
 Աչերն ունէր փայլ :

“ Յիսուս Փրկիչ , իմն Աստուած , ընկալ զոգիս ” մրմնջէ ,
 “ Գորովագուծ իմ՝ ճնողը , մնաք բարեաւ . . . ” եւ ննջէ .
 Ամբիժ հոգին վերանայր , Քերովբէին գիրկ ընդ խառն
 Ունայնութեան աշխարհէն անմահութեան ՚ի կայան :

Հինգ տարի մնաց
 Ի գիրկ ճնողաց .
 Արդ՝ զանտէր թողած
 Թռչի առ Աստուած :

Լուսնոց քովէն բաւձրանան եւ աստեղներ բիւրաւար ,
 Վե՛հ տեսարան կ'ընծայեն սքանչելի շարքերով .
 “ Նայէ՛ , կ'ըսէր , հրեշտակն , ինչ է երկրիս տեսարան ,
 Խաւարն միայն իւր բաժին , տես դու երկնից մեծ խորան ” :

Իսկ մանուկն անմեղ ,
 Հրճուելով կ'ըսէր .
 “ Եկու՛ր թռչտինք ,
 Երկընթէ երկինք ” :

Անհունութեան ասպարէզ եռանդագին կը գիմեն ,
 Հազարաւոր լուսագունդ՝ յետուս թողած վեր կ'երեն .
 “ Օրհնենք , ըսաւ սուրբ ոգին , օրհնենք մեր սուրբ Արարիչն ,
 ” Ահա՛ Անոր անմահ փառքն՝ երգենք մէկ տեղ ցնծալից ” :

Օրհնելով հասան
 Յ'Անմահին կայան ,
 Մանուկն Քերովբէն
 Ուր դեռ եւս կ'երգեն :

Յօրինեաց
 Յովհ . Թ . Տաղանթեանց :

